

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**  
**(Периодический сборник научных статей)**

**№ 13**

**Ереван**  
**Издательство ЕГУ**  
**2017**

**YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES  
(scholarly periodical journal)**

**№ 13**

**YEREVAN  
YSU PRESS  
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),  
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն  
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,  
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-  
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն  
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,  
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով  
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան  
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր  
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան  
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր  
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր  
(Ուզբեկստան)

*Մկրտչյան Հայկուհի<sup>1</sup>*

**ԱՄՆ ԵՎ ՉԺՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, տեղեկատվական հասարակության ձևավորման հետևանքով այսօր առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերել Ազգային անվտանգության բաղադրամաս հանդիսացող տեղեկատվական անվտանգության խնդիրները: Բավական է նշել, որ համաձայն Գլխակազմի համաշխարհային ֆեդերացիայի 2000թ. խորհրդատվորակ եզրակացությունների՝ մարդկության համար գլխավոր վտանգ են համարվում տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները<sup>2</sup>:

Ավելին, ժամանակակից համաշխարհային քաղաքականության առաջնային դիրքերում ոչ թե ռազմական կամ տնտեսական ներուժ ունեցող երկրներն են, այլ նրանք, որոնք կարողանում են մշակել ու իրականացնել համապատասխան տեղեկատվական քաղաքականություն: Այս ամենը անհնար է առանց տեղեկատվական գերիշխանության հաստատման կամ տեղեկատվական օպերացիաների իրականացման:

---

<sup>1</sup> ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ h.mkrtyan@ysu.am

<sup>2</sup> Տե՛ս, Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ ([http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2276](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2276), վերջին մուտքը՝ 10.05.2017) :

Ուշագրավ է տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականության էվոլյուցիայի ու օրինաչափությունների ԱՄՆ փորձը՝ որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների ամենահզոր քաղաքական, տնտեսական ու ռազմական դերակատարներից մեկի: Իրավամբ, ԱՄՆ-ը համարվում է նաև տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակման առաջին երկրներից: Հարկ է նկատել, որ տեղեկատվական անվտանգության պետական համակարգը ԱՄՆ-ում ներդրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Այդ ժամանակ էլ սկսվել է ոլորտը կարգավորող իրավական բազայի մշակումը: Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունն ապահովող քառասուն օրենքներ են մշակվել: Ավելին, կյանքի բոլոր բնագավառներում տեխնոլոգիաների ներդնումը թույլ է տալիս ասել, որ ԱՄՆ-ը այդ ոլորտում թելադրող դեր ունի:

Տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրը հատկապես կարևոր է հենց ԱՄՆ-ի համար, որտեղ առաջին անգամ զգացվել է տեղեկատվական հեղաշրջման ազդեցությունը: Այստեղ են ի հայտ եկել առաջին համակարգիչները: ԱՄՆ-ում է, որ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները դիտվել են որպես ռազմավարական ռեսուրս: Դրանք բավականին զարգացել ու ներդրվել են հասարակության ու պետության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Տեղեկատվական ոլորտում ԱՄՆ հաջողությունը կապված է նաև տեխնոլոգիաների զարգացման մեջ պետության դերով:

1992թ-ի ԱՄՆ նախագահական ընտրությունների ժամանակ դեմոկրատական կուսակցությունը պնդում էր, որ տեխնոլոգիաների զարգացման մեջ արված ներդրումները ապագայում ամերիկյան պետության տնտեսական առաջընթացի

նախապայմանն են դառնալու<sup>3</sup>: Նախագահ Քլինտոնի ղեկավարման ժամանակ ԱՄՆ քաղաքականությունն ուղղված էր տեխնոլոգիաների առավելագույն օգտագործմանը՝ ԱՄՆ սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու և համաշխարհային տեղեկատվական առաջնորդություն ապահովելու նպատակով: Հենց Քլինտոնի կառավարման օրոք է կարծիք ձևավորվել, որ տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերը ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչն են:

Արդյունքում, պետական կառավարման մարմինները, ռազմական ու տնտեսական կառույցները մեծապես կախվածություն են ձեռք բերել տեղեկատվական տեխնոլոգիաներից: Իսկ որքան մեծ է այդ կախվածությունը վերոհիշյալից, այնքան ավելի բարդ ու բազմազան են տեղեկատվական տարածությունից եկող սպառնալիքները: Արդեն 1990-ական թվականների կեսերին ամերիկյան կառավարությունը սկսեց ուշադրություն դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող հանցագործություններին: Ամերիկյան փորձագետները նշում էին, որ կիրեռահաբեկչությունն ու կիրեռահանցագործությունները բավականին լուրջ մարտահրավերներ են երկրի համար:

Այդ ժամանակ երկրի ղեկավարությունը սկսեց մշակել տեղեկատվական սպառնալիքների հակազդման մեթոդներ: Ընդունվեցին օրենքներ, որոնք պատիժ էին նախատեսում տեղեկատվական տեխնոլոգիաները հանցավոր նպատակներով օգտագործելու համար:

---

<sup>3</sup> A New Covenant with the American People. Democratic Party Platform of 1992 July 13, 1992.

Բ. Քլինտոնն ԱՄՆ առաջին նախագահն էր, ով համակարգչային ցանցերը և տեղեկատվական համակարգերը դասեց երկրի կրիտիկական ենթակառուցվածքների շարքին: Նրա՝ 1998թ.-ի PDD-63 «Կրիտիկական ենթակառուցվածքի պաշտպանություն»<sup>4</sup> կարգադրությունը դարձավ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում երկարաժամկետ հայեցակարգի մշակման սկիզբ: Կարգադրության համաձայն, կրիտիկական ենթակառուցվածքների շարքին (տրանսպորտային, նավթագազային, ջրային, արտակարգ իրավիճակների ծառայության, իշխանության մարմինների, բանկային ու ֆինանսական, էլեկտրաէներգետիկայի ենթակառուցվածքներ) դասվեց տեղեկատվական ենթակառուցվածքը: Ընդ որում, նշվում էր, որ յուրաքանչյուր ենթակառուցվածքի անվտանգության կարևոր գործոնը դրա տեղեկատվական բաղկացուցիչի անվտանգությունն է:

ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգության խնդիրներին սկսեցին մեծապես ուշադրություն դարձնել 2001թ.-ի սեպտեմբերի 11-ի՝ ավելի քան երեք հազար մարդու կյանք խլած ահաբեկչական գործողություններից հետո: Ջորջ Բուշի կառավարությունը ազգային անվտանգության ապահովման համակարգում լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացրեց: Հատուկ կարևորվեց կառավարության գործունեության, ռազմական ու հետախուզական գործողությունների իրականացման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը:

2002թ.-ին ընդունված «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը» պահանջում էր ստեղծել այնպիսի համակարգ, որը զինված ուժերի համար հստակ, ընդգրկուն

<sup>4</sup> Shi'u, Critical Infrastructure Protection: Presidential Decision Directive / NSC-63. Washington D.C.: The White House. May 22, 1998 (<http://www.fas.org/irp/offdocs/pdd/pdd-63.htm>, վերջին մուտքը՝ 10.02.2017թ.):



տեղեկատվություն կտրամադրեր ոչ միայն իրական, այլև ԱՄՆ ազգային անվտանգությանը սպառնացող ցանկացած հնարավոր սպառնալիքների մասին:

Բարաք Օբամայի իշխանության գալուց հետո կիրեռտարածության անվտանգության ապահովման հետ կապված խնդիրները չկորցրեցին իրենց հրատապությունը: Օբամայի կառավարությունը խնդիր ուներ ընդլայնել միջազգային երկխոսությունը կիրեռանվտանգության հետ կապված խնդիրների շուրջ և ապահովել ԱՄՆ առաջատար դիրքը այդ հարցում: Ընդ որում, հատուկ ուշադրություն պետք է դարձվեր Ռուսաստանի ու Չինաստանի հետ համագործակցությանը<sup>5</sup>:

2009թ-ի մայիսին պատրաստվեց «Կիրեռտարածությունում քաղաքականության ակնարկ»<sup>6</sup> փաստաթուղթը, որում առաջարկվում էին կիրեռանվտանգության ապահովման համակարգի հետագա քայլերը: Ընդհանուր առմամբ, վերջինս 2008թ-ի Կիրեռանվտանգության ազգային համալիր նախաձեռնության լրացումն էր: Հիմնական բնութագրական հանգամանքն այն էր, որ ԱՄՆ-ը, մեծապես կախված լինելով ցանցերից, միայնակ չի կարող ապահովել կիրեռանվտանգությունը: Անհրաժեշտ է համագործակցել հատկապես այն երկրների հետ, որոնք խնդիրի լուծման ժամանակ նմանատիպ մոտեցումներ ունեն, կիսում են ԱՄՆ-ը մոտեցումը կիրեռտարածության անվտանգության ապահովման ժամանակ

---

<sup>5</sup> Securing Cyberspace for the 44th Presidency. A Report of the CSIS Commission on Cybersecurity for the 44th Presidency. – P. 23.

<sup>6</sup> Cyberspace Policy Review: Assuring a Trusted and Resilient Information and Communications Infrastructure (issued on 29.05.2009) // The White House. URL: [http://www.whitehouse.gov/assets/documents/Cyberspace\\_Policy\\_Review\\_ fi nal.pdf](http://www.whitehouse.gov/assets/documents/Cyberspace_Policy_Review_final.pdf) (վերջին մուտքը՝ 15.10.2011թ):

տեխնիկական չափորոշիչների, ազգային օրենսդրության հարցերը շոշափող ընդունելի իրավական նորմերի, ինչպես նաև կիրբեռհանցագործությունների և կիրբեռհարձակումներին ի պատասխան գործողությունների կազմակերպման ժամանակ օրենսդրական բազայի մշակման հարցերում:

Ավելին, կիրբեռտարածությունում անվտանգության ապահովման հարցերի հետ կապված համագործակցությունը օտարերկրյա գործընկերների հետ աշխուժանցելու նպատակով 2011թ-ի մայիսին ԱՄՆ-ում մշակվեց և հրապարակվեց «Կիրբեռտարածության միջազգային ռազմավարությունը», որտեղ ձևակերպված էին գլոբալ մակարդակում ԱՄՆ կիրբեռանվտանգության ապահովման հիմնական մոտեցումները, որի համար կարող էին կիրառվել ազդեցության բոլոր հնարավոր միջոցները՝ դիվանագիտական, ռազմական, տնտեսական<sup>7</sup>:

Ռազմավարության համաձայն, ԱՄՆ հիմնական խնդիրը բաց, փոխգործակցող, անվտանգ ու հուսալի տեղեկատվական ու հաղորդակցային ենթակառուցվածքի ստեղծումն է, որի նպատակով անհրաժեշտ է տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների համար բազմակողմ փոխհամաձայնեցված միջազգային չափորոշիչների մշակում ու ընդունում<sup>8</sup>:

Փաստաթղթում նշվում է, որ ԱՄՆ հիմնական նպատակը առաջնորդության ապահովումն է խաղաղ ու կայուն կիրբեռտարածության ստեղծման բազմակողմ գործընթացում: ԱՄՆ նպատակ ունի զարգացնել համագործակցությունը երկու ուղղություններով՝ միջպետական (երկկողմ ու բազմակողմ հիմքերով) և պետական-մասնավոր (ինտերնետ ծառայություն

<sup>7</sup> International Strategy for Cyberspace // White House. ([http://www.white-house.gov/sites/default/files/rss\\_viewer/international\\_strategy\\_for\\_cyberspace.pdf](http://www.white-house.gov/sites/default/files/rss_viewer/international_strategy_for_cyberspace.pdf) (Վերջին մուտքը՝ 15.10.2015թ.)):

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 5:

տրամադրողներ, ծրագրային ապահովումը մշակողներ, համակարգչային տեխնիկա արտադրողներ):

Երկկողմ համագործակցության համար ԱՄՆ-ի համար կարևոր դաշնակիցներ էին ոլորտում պոտենցիալ հակառակորդներ Ռուսաստանն ու Չինաստանը: Բացի Ռուսաստանի ու Չինաստանի հետ համագործակցելուց, ԱՄՆ-ը փորձում է իր դիրքերն ամրապնդել ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի շրջանակում:

Այսպիսով, ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներին սկսեցին ուշադրություն դարձնել 1990-ական թվականների սկզբից: Բանն այն է, որ նախագահ Քլինտոնն իրականացնում էր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման քաղաքականություն, իսկ վերջիններիս սրբնթաց զարգացման հետևանքով դրանց ներթափանցումը երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր կարևոր բնագավառներ կախվածություն առաջացրեց տեղեկատվական ենթակառուցվածքից, ի հայտ եկան որակապես նոր սպառնալիքներ: Հենց այդ ժամանակ համակարգչային ցանցերը և տեղեկատվական համակարգերը դասվեցին երկրի կրիտիկական ենթակառուցվածքների շարքին, տեղեկատվական անվտանգությունը դարձավ ԱՄՆ-ի ազգային անվտանգության անբաժանելի բաղկացուցիչ:

Ավելին, ԱՄՆ-ը, ընդունելով, որ միայնակ չի կարող դիմակայել տեղեկատվական տարածությունից եկող սպառնալիքներին, որդեգրեց միջազգային համագործակցության քաղաքականության երկկողմ ու բազմակողմ քաղաքական կուրս: Ընդ որում, երկկողմ համագործակցության հետ կապված, ԱՄՆ-ի համար կարևորվում է համագործակցությունը Ռուսաստանի և

Չինաստանի հետ, որոնք երկրի համար կիրենսպառնալիքների հիմնական աղբյուրներն են և ոլորտում հիմնական մրցակիցները, իսկ բազմակողմ մասշտաբով համագործակցությունը երկիրն իրականացնում է միջազգային կազմակերպությունների՝ հատկապես ՆԱՏՕ-ի շրջանակում, որտեղ ինքը թելադրող դիրք ունի:

ԱՄՆ-ի 2015թ.-ի «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ տեղեկատվական անվտանգության ուղղակի հիշատակումը համապատասխանում է ՏԱ-ի նեղ իմաստին, այն է՝ Կիրենանվտանգությանը: Տեքստի «Կիրենանվտանգություն» բաժնում մասնավորապես նշվում է. «Որպես Համացանցի ծննդավայր՝ Միացյալ Նահանգներն ունի ցանցային աշխարհն առաջնորդելու համար հատուկ պատասխանատվություն: Ավելի ու ավելի է աճում բարեկեցության ու անվտանգության կախումը բաց, համագործակցելի, պաշտպանված և հուսալի Համացանցից: Մեր տնտեսությունը, ապահովությունը և առողջությունը փոխկապված են ցանցային ենթակառուցվածքով, որը դարձել է պատասխանատվությունից խուսափելու ձգտող թշնամական պետական, քրեական և անհատ ղեկավարների թիրախ: Հենվելով Կիրենանվտանգության կամավոր հայեցակարգի վրա՝ մենք պաշտպանում ենք Դաշնային ցանցերն ու աշխատում մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ԱՄՆ-ի կենսականորեն կարևոր ենթակառուցվածքի անվտանգությունն ու կայունությունն ամրապնդելու համար»:

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ապահովման ամերիկյան փորձը ցույց է տալիս, որ ԱՄՆ տեղեկատվական

---

<sup>9</sup> «National Security Strategy». The White House, February 2015, PP. 12–13 ([https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015\\_national\\_security\\_strategy.pdf](https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy.pdf), վերջին մուտքը՝ 13.07.2017թ.):

անվտանգության և քաղաքականության էվոյուցիան համաշխարհային զարգացումների պրոյեկցիան էր, այդտեղ տեղեկատվական անվտանգության խնդիրները ի սկզբանե տեխնիկական՝ համակարգչային տվյալների պաշտպանությունից, սկսեցին դիտվել որպես կրիտիկական, իսկ տեղեկատվական քաղաքականությունը դարձավ արտաքին և անվտանգության քաղաքականության անքակտելի բաղադրիչ: ԱՄՆ օրինակը խոսում է և ուսուցողական տեղեկատվական անվտանգության կառուցակարգերի մշակման և անհրաժեշտ գործիքարանի հստակեցման հարցում:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, որը արևմտյան արժեքների ու մտածելակերպի ներկայացուցիչ է, Չինաստանը արևելյան արժեքներ կրող ավադական պետություն է, որի մասին ողջ աշխարհում առասպելներ են հյուսվում: Այդ առասպելներին հաճախ նպաստում է չինական փակ հասարակությունը՝ իր բարդ լեզվով, օտարերկրացիների համար անհասկանալի մշակույթով, ավանդույթներով և այլն:

Ավելին, Չինաստանին հաճախ մեղադրում են տեղեկատվական տարածության մեջ վիրուսակիր ծրագրերի տարածման գործում: Արևմտյան երկրների հետախուզական ծառայությունների հաշվետվություններում ՉԺՀ-ն համարում են այն հիմնական երկրներից մեկը, որտեղից գալիս են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները: Այս ամենը, իհարկե, նպաստում է Չինաստանի բացասական կերպարի ստեղծմանը:

Թերևս այդ է պատճառը, որ երկրի իշխանությունները համացանցը և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները համարում են ինչպես հակառակորդի զսպման,

այնպես էլ միջազգային ասպարեզում երկրի դրական իմիջ  
ձևավորելու համար կարևորագույն միջոցներ:

Այսպես, ներկայումս Չինաստանում ակտիվորեն կիրառվում  
են աստրոտուրֆինգի տեխնոլոգիաներ: Աստրոտուրֆինգը  
համացանցի օգտատերերի կողմից մշակված եզրույթ է, որը  
նշանակում է հաճախ հատկապես համացանցում կեղծ  
հասարակական կարծիքի ձևավորում, որտեղ հատուկ  
վարձակալված մարդիկ բազմաթիվ ֆորումներում, ՋԼՄ-ների  
կայքերում և բլոգներում գրում են պատվիրված նամակներ, որոնց  
նպատակը քաղաքական գործչին, քաղաքական խմբերին կամ  
կուսակցություններին, տարբեր իրադարձությունների հանդեպ  
ազգային աջակցության տպավորություն ստեղծելն է<sup>10</sup>:

Բացի այդ, Չինաստանի իշխանությունները հատուկ  
ուշադրություն են հատկացնում տեղեկատվական  
անվտանգության ապահովման ինչպես տեխնիկական, այնպես էլ  
տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունից պաշտպանելու  
խնդիրներին:

2005թ-ի նոյեմբերին Չինաստանում ընդունվել է 2006-2020թթ  
ինֆորմատիկացիայի զարգացման պետական  
ռազմավարությունը, որտեղ ձևակերպված էին համացանցի  
զարգացման հիմնական ուղղությունները<sup>11</sup>: Կառավարությունը  
խրախուսում էր համացանցի օգտագործումը որոշ բնագավառների  
աշխատակիցների՝ գիտնականների, ՋԼՄ-ների աշխատակիցների,  
բիզնեսմենների և հատկապես արտասահմանցի ներդրողների  
համար: Ի դեպ, համաձայն Չինաստանում լայնորեն կիրառում

<sup>10</sup> Необходимость защитить интернет от «астротурфинга» приобретает все большую актуальность. (<http://www.inosmi.ru/world/20110318/167458693.html>, վերջին մուտքը՝ 14.07.2017թ.):

<sup>11</sup> Положение интернета в Китае. Пресс-канцелярия госсовета КНР. 2011, 1 февраля, ([http://russian.china.org.cn/government/archive/baipishu/txt/2011-02/01/content\\_21857458.htm](http://russian.china.org.cn/government/archive/baipishu/txt/2011-02/01/content_21857458.htm), վերջին մուտքը՝ 12.06.2017թ.):

գտած լոգունգի, համացանցը աշխատանքային գործիք է և ոչ թե ժամանակ անցկացնելու միջոց<sup>12</sup>:

2006թ-ից Չինաստանում համացանցի վրա վերահսկողություն իրականացնելու նպատակով իր աշխատանքներն է սկսել հատուկ ոստիկակական ծառայությունը: Համացանց-ոստիկանները կոչված են հսկելու կայքերի, առցանց ֆորումների և սոցիալական ցանցերի բովանդակությունը: Չինական մեծամասշտաբ կայքերում կամ ֆորումներում հաղորդագրություն թողնելու համար պետք է պարտադիր գրանցվել, որի ժամանակ անհրաժեշտ է լրացնել իրական անձնական տվյալներ, հասցե և նույնականացման համար: Վերոհիշյալ տվյալների հիման վրա համակարգչային բանկը ստուգում է տվյալների ճշտությունը, որից հետո միայն թույլատրվում է օգտատիրոջ գրանցումը<sup>13</sup>: Այս ամենը հնարավորություն է տալիս արագ արձագանքել խախտումներին: Օրինակ, 2014թ-ի հունվարին Չինաստանի մի քանի նահանգներում ոստիկանությունը ձերբակալել է համացանցի օգտատերերի, որոնք բլոգներում տեղեկատվություն էին տարածել թոչնի գրիպի համաճարակի զանգվածային տարածման մասին: Այդ օգտատերերից շատերը տուգանվել են կամ ձերբակալվել<sup>14</sup>:

Պեկինը գտնում է, որ կիբեռտարածության պետական կանոնակարգումը մարդու իրավունքների և ազատությունների խախտում չէ, այլ ընդհակառակը, ուղղված է դրանց

---

<sup>12</sup> Ибрагимова Г.Р. Стратегия КНР в киберпространстве: вопросы управления Интернетом и обеспечения информационной безопасности//Индекс безопасности. 2013. N1. С. 169-184.

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>14</sup> В Китае арестованы блогеры за распространение слухов об эпидемии птичьего гриппа (<http://itar-tass.com/mezhdunarodnaya-panorama/922235>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ.):

պաշտպանությանը: Չինաստանում արտասահմանյան կայքեր մուտքը խիստ սահմանափակ է, արգելված է միջազգային սոցիալական ցանցերին չինացիների հասանելիությունը: Այնպիսի հայտնի կայքեր, ինչպիսիք են Twitter ու Youtube, որոնք ԱՄՆ-ի համար խոսքի ազատության ու ինքնարտահայտման համար հարթակ են, Չինաստանում համարվում են տեղեկատվական ազդեցության, արևմտյան արժեքների սերմանման գործիքներ<sup>15</sup>: Հատկապես «արաբական գարնան» իրադարձությունների ժամանակ չինական ռազմական գործիչներն ուշի ուշով հետևում էին արաբական երկրներում համացանցի միջոցով համակարգվող զանգվածային շարժումներին, ինչի հիման վրա այսօր չինացիները համացանցը դիտում են որպես ապագայի պատերազմների հիմնական հարթակ:

Չինաստանը համարում է, որ բաց և ազատ մուտքը տեղեկատվություն կարող է երկրի ներսում անկայունության սպառնալիք հանդիսանալ: Կապված 2013թ-ի իրադարձությունների հետ, երբ Էդուարդ Մնտուդենի կողմից բացահայտվեցին ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից չինացի պաշտոնյաների, քաղաքական գործիչների հեռախոսագրույցների լսման դեպքերը, որոնք ըստ էության արվել էին դեռևս 2009թ-ից, ստիպեցին չինացի մասնագետներին ավելի լրջորեն զբաղվել երկրի տեղեկատվական անվտանգության տեխնիկական համակարգերի հարցերով: Համացանցում ամերիկյան լրտեսության դեպքերի հետաքննությունը ցույց է տվել, որ Չինաստանը ԱՄՆ-ի հակաօրինական գործողությունների իրականացման ժամանակ հիմնական թիրախն է եղել:

---

<sup>15</sup> Swaine M. D. Chinese Views on Cybersecurity in Foreign Relations Initiative [http://carnegieendowment.org/email/South\\_Asia/img/CLM42MSnew.pdf](http://carnegieendowment.org/email/South_Asia/img/CLM42MSnew.pdf) (վերջին մուտքը՝ 25.07.2017թ.):



Հիմնական փաստաթուղթը, որում ընդգծվում է չինական հասարակության կյանքում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զգալի դերը, Չինաստանի Ազգային անվտանգության համընդգրկուն հայեցակարգն է<sup>16</sup>: Հայեցակարգում նշվում է, որ ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը ոչ միայն լայն հնարավորություններ է ընձեռում, այլև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար քաղաքական, տնտեսական, ռազմական անվտանգության սպառնալիքներ է ստեղծում<sup>17</sup>:

Չինաստանի համար տեղեկատվական անվտանգությունը նախևառաջ երկրի նորարարությունների անվտանգությունն է և դրանում կարևոր է երկրի մոտեցումը կապված տեղեկատվական և կիրեռանվտանգության հարցերի հետ:

2017թ-ի հունիսի մեկից Չինաստանում ուժի մեջ է մտել Չինաստանի կիրեռանվտանգության մասին օրենքը, որի առաջին հոդվածում մասնավորապես նշվում է. «Սույն օրենքը մշակվել է ցանցային անվտանգության ապահովման կիրեռտարածության ինքնիշխանության և ազգային անվտանգության պաշտպանության, սոցիալական ու հասարակական շահերի բավարարման, քաղաքացիների, իրավաբանական անձանց և այլ կազմակերպությունների օրինական իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով՝ տնտեսության ու հասարակության տեղեկացվածության առողջ զարգացմանը նպաստելու համար»<sup>18</sup>:

---

<sup>16</sup> Гуанкай С. Всеобъемлющая концепция национальной безопасности Китая. Россия в Глобальной Политике. 2009. N3. (май-июнь); Lu Yongxiang. Science & Technology in China: A Roadmap to 2050. Chinese Academy of Science, 2010.

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>18</sup> Кибербезопасность по-китайски: в КНР вступает в силу новый закон об интернете (<http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4290068>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ.):

Վերջին տարիներին Չինաստանում պաշտպանական քաղաքականությունից անցում է կատարվել դեպի հարձակողական քաղաքականության: 2003թ-ի «երեք պատերազմների հայեցակարգը» ընդգրկում է հոգաբանական պատերազմ, մեդիապատերազմ և իրավական պատերազմ: Հայեցակարգում խոսվում է հարձակողական գործողությունների և Չինաստանի կողմից առաջինը նման հարված հասցնելու անհրաժեշտության մասին<sup>19</sup>: Ավելին, ամերիկյան մասնագետները վկայում են, որ վերջին տաս տարիների ընթացքում ամերիկյան տեղեկատվական համակարգեր մուտք գործելու բազմաթիվ դեպքեր են գրանցվել, որոնց արդյունքում Չինաստանը տիրապետել է կոմերցիոն և ռազմական տվյալների:

Ավելին, չինական բանակում արդեն կա հատուկ ստորաբաժանում, որը զբաղվում է կիբեռտարածությունում տեղեկատվական հակամարտության օպերացիաներ կազմակերպելով: Մասնավորապես, ստորաբաժանումն իրականացնում է համակարգչային հետախուզություն և հակահետախուզություն, էլեկտրոնային վիրուսային գրոհներ, հակավիրուսային պաշտպանություն: Կապույտ կիբեռբանակ անվանումով այս կիբեռգործերի թիվը, ըստ ամերիկյան փորձագետների, Չինաստանում մոտավորապես 30 հազարի է հասնում:

Ընդհանուր առմամբ, չինական կիբեռստորաբաժանումների հաջողությունը մեծապես կախված է կառավարական կառույցների, ռազմական գործիչների և հաքերների հետ սերտ համագործակցությամբ: Բացի այդ, կիբեռտարածությունում երկրի ինքնիշխանությունը պաշտպանելու, տեղեկատվական

---

<sup>19</sup> Болгов Р. В. Информационные технологии в модернизации вооруженных сил КНР: политические аспекты. (<http://www.politex.info/content/view/774/30/> (վերջին մուտքը՝ 08.03.2016թ.)):

ենթակառուցվածքի անվտանգությունը ապահովելու, կիրեռահարեկչության և համացանցում զանազան հանցագործությունների դեմ պայքարելու նպատակով Չինաստանը ակտիվորեն համագործակցում է այլ երկրների հետ և համարում, որ համացանցում առանց վարքի համընդհանուր նորմերի մշակման, ուղղակի անհնար է ոլորտում հետագա միջազգային համագործակցությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերում հաճախ ավելի շատ ընդհանուր գծեր կան Ռուսաստանի հետ, ապա ոլորտում հենց Ռուսաստանն է հանդիսանում Չինաստանի ռազմավարական գործընկերը:

Բացի այդ, Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՄԿ) այն հարթակներից մեկն է, որը Չինաստանն օգտագործում է տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման հարցերը կարգավորելու համար: Այդ բնագավառում ՇՀԿ-ի անդամ պետությունների կառավարությունների միջև 2009թ-ին Եկատերինբուրգում ստորագրված համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2011թ-ից և հիմք է հանդիսանում կամավոր հիմունքներով ոլորտում սերտ միջազգային համագործակցության համար<sup>20</sup>: Չինաստանն ակտիվերն համագործակցում է նաև ՄԱԿ-ի շրջանակում :

Այսպիսով, Չինաստանում համացանցը խիստ վերահսկվում և ուղղորդվում է պետության կողմից: Դա մի կողմից հնարավորություն է տալիս երկրի իշխանություններին առանց մեծ

---

<sup>20</sup> О вступлении в силу Соглашения между правительствами государств-членов ШОС о сотрудничестве в области обеспечения международной информационной безопасности ([http://www.mid.ru/mezhdunarodnaa-informacionnaa-bezopasnost/-/asset\\_publisher/UsCUTiw2pO53/content/id/203770](http://www.mid.ru/mezhdunarodnaa-informacionnaa-bezopasnost/-/asset_publisher/UsCUTiw2pO53/content/id/203770), վերջին մուտքը՝ 10.05.2017թ.):

ծախսերի ձևավորելու Չինաստանի դրական կերպարը, մյուս կողմից՝ արգելելու անցանկալի տեղեկատվության տարածումը երկրի ներսում:

«Տեղեկատվական անվտանգությունը» Չինաստանում ընկալվում է դրա լայն իմաստով, այն է՝ տեղեկատվական-տեխնիկական (կիբեռանվտանգություն) և տեղեկատվական-սոցիալական անվտանգություն:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում նորմատիվային փաստաթղթերին, անընդհատ մշակում են նորերը կամ լրամշակում արդեն գոյություն ունեցածները, Չինաստանն ավելի գործնական քայլերի է դիմում: Այդ է վկայում այն հանգամանքը, որ ոլորտում աննախադեպ՝ Կիբեռանվտանգության մասին օրենքը, ՉժՀ-ում միայն 2017թ-ին է ուժի մեջ մտել, թեպետ, իհարկե, երկրում հիմնահարցի հետ կապված տարբեր հայեցակարգեր ևս մինչ այդ մշակված են եղել:

Եթե ԱՄՆ հիմնական խնդիրը բաց, փոխգործակցող, անվտանգ ու հուսալի տեղեկատվական ու հաղորդակցային ենթակառուցվածքի ստեղծումն է, ապա Չինաստանի խնդիրը համացանցը վերահսկելն է և պետության կողմից ուղղորդելը:

Միջազգային համագործակցության առումով եթե ոլորտում ԱՄՆ-ի համագործակցության հիմնական հարթակը ՆԱՏՕ-ն է, ապա Չինաստանը արդյունավետ համագործակցում է ՇՀԿ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում:

Ամփոփելով երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՉժՀ-ի տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող հիմնական մոտեցումները, պարադիգմաները, տեղեկատվական անվտանգության հարձակողական ու պաշտպանողական քաղաքականության առանձնահատկությունները՝ ակնհայտ է

ԱՄՆ-ի ձգտումը՝ տեղեկատվական գերակայություն հաստատելու համաշխարհային մակարդակում, մինչդեռ ՉԺՀ-ն միայն վերջին տարիներին է ոլորտում պաշտպանական քաղաքականությունից անցում կատարել դեպի հարձակողական:

«Տեղեկատվական անվտանգությունը» Չինաստանում ընկալվում է դրա լայն իմաստով, այն է՝ տեղեկատվական-տեխնիկական (կիրքեռանվտանգություն) և տեղեկատվական-սոցիալական անվտանգություն: Մինչդեռ ԱՄՆ-ում ընդունված է հասկացության նեղ ընկալումը՝ այն է կիրքեռանվտանգությունը:

**СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕХАНИЗМОВ ОБЕСПЕЧЕНИЯ  
ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ США И КНР  
(Резюме)**

*Մկրտչյան Այկուի*

Подчеркивая важность проблем информационной безопасности в современном мире, анализ опыта механизмов обеспечения информационной безопасности ведущих сверхдержав данной сфере, США и Китая, может быть поучительным для Армении.

**COMPARATIVE ANALYSIS OF INFORMATION SECURITY  
PROTECTION MECHANISMS OF USA AND CHINA  
(summary)**

*Mkrtchyan Haykuhi*

Emphasizing the importance of information security issues in the modern world, it is noteworthy that the analysis of the experience of information security mechanisms of the leading superpowers of the sector, the United States and China, can be instructive for Armenia.